ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/271

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

ՀՀ ֆինանսների նախարարության լիազորված ներկայացուցիչ

Լ. Սահակյանի (լիազորագիր տրված՝ 11.01.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.12.2020թ. թիվ 1/26-1/19340-2020 գրությամբ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 23.12.2020թ. թիվ 1/26-1/19340-2020 գրությամբ նախաձեռնել է «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնման ընթացակարգին:

Սակայն հայտնում ենք, որ գնային առաջարկը թյուրիմացաբար ներկայացվել է ոչ թե 3 տարվա, այլ մեկ տարվա համար, ինչն անհնար է դարձնում 3 տարվա կտրվածքով ծառայությունների մատուցումը, քանի որ տվյալ դեպքում ընկերությունը կարող է կրել լուրջ ֆինանսական կորուստներ, ինչն էլ հիմք է հանդիսացել, որպեսզի ընկերությունը հրաժարվի գնման ընթացակարգին հետագա մասնակցությունից:

Միաժամանակ հայտնում ենք, որ եթե մեկ տարվա համար ներկայացված գնային առաջարկը հնարավոր լինի բազմապատկել երեքով և արդյունքում ստանալ ծառայությունների մատուցման համար երեք տարվա գինը, ապա ընկերությունը պատրաստ է շարունակել մասնակցել գնման ընթացակարգին և հաղթող ճանաչվելու դեպքում մատուցել ծառայությունները»:

«Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/271 ընթացակարգի շրջանակներում 12.01.2020թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 16.12.2020թ. գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից՝ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01021187, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք, թոթովենցի փ., շ. 5, բն. 12, էլ հասցե՝ cleaningexpertllc@gmail.com) հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/271 ընթացակարգի շրջանակներում 12.01.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

4. ՍՑ-ՆԳ-2020/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/271 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

3. «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2020թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հետագա մասնակցությունից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.12.2020թ. թիվ 1/26-1/19340-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող (ընտրված) մասնակից, և որոշվել է անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ կնքել պայմանագիր:

<u>«Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2020թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հետագա մասնակցությունից:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, ***քանի որ գնահատող հանձնաժողովի 11.12.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ն արդեն իսկ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.12.2020թ. գրությամբ հայտնել է, որ հրաժարվում է «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հետագա մասնակցությունից, այսինքն՝ ըստ էության որպես Ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.12.2020թ. թիվ 1/26-1/19340-2020 գրությամբ «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էքսպեռտ 1» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**